ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2138-Ա/2 «21» նոյեմբերի, 2022 թ.

«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N 1749-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 18-ի նիստի N 2 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

– ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,

– կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

– ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2022 թվականի դեկտեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2022 թ. նոյեմբերի 21-ի
N 2138 -Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Ծածկագիր	Ղեկավար	Համաղեկավար	Բնագավառ	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1.	22rl-007	Ակոպյան Արգամ	Դավթյան Դավիթ Հայրապետի	Քիմիա	Անցումային մետաղների հիմքով նոր նանոկառուցվածքային կատալիզատորների սինթեզ և բնութագրում	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
2.	22rl-037	Ապրեսյան Արթուր	Թումասյան Արմեն Ռաֆիկի	Ֆիզիկա և աստղագիտություն	Կոլլայդերային գիտափորձերի համար բարձր ճշտության ժամանակային դետեկտորների մշակումը և Հիգգսի բոզոնային զույգերի որոնումը CMS (LHC) գիտափորձում	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
3.	22rl-017	Գևորգյան Վլադիմիր	Հակոբյան Ռոբերտ Մամիկոնի	Քիմիա	N-Պարունակող հետերոցիկլերի սինթեզի և C-H ֆունկցիոնալացման նոր մեթոդաբանությունների մշակում	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
4.	22rl-016	Դանիելյան Տանիել	Սերոբյան Վահրամ Վահագնի	Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	Հայաստանի Պալեոզոյան լեռներում շրջակա միջավայրի փոփոխությունների համաշխարհային ռեկորդի վերծանումն ընդդեմ տարածաշրջանայինի	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
5.	22rl-055	Դեհղանի Մեհդի	Ռուդով Ալեքսանդր Վախթանգի	Կենսաբանական գիտություններ	Իրանաթուրանական տարածաշրջանի C4 դոմինանտ բուսականության և էքստրեմոֆիլ բուսատեսակների էկոֆիզիոլոգիական և աշխարհագրական ուսումնասիրություններ որպես մոդել կլիմայի փոփոխման կանխատեսման և էկոհամակարգերի պահպանության համար	ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
6.	22rl-052	Թեոֆանիս Ռապտիս	Խաչատրյան Հրանտ Հարությունի	Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	Դոմենի տեղաշարժ իրերի համացանցում մեքենայական ուսուցման կիրառություններում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
7.	22rl-012	Խաչատրյան Հայկ	Սահակյան Արսեն Արծրունի	Նյութագիտություն	Արհեստական Բանականության վրա հիմնված մոդելի մշակում հաջորդ սերնդի արևային բջիջների և դիսպլայների նյութերի մոդելավորման, սինթեզների և կայունացման համար. Պերովսկիտներ	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
8.	22rl-048	Կնոբլոխ Թերեզիա	Զադոյան Օվսաննա Աշոտի	Նանոտեխնոլոգիա	Տարբեր մեկուսիչ հարթակների վրա մակերևութային տրորմամբ ստացված երկչափ կիսահաղորդիչներ՝ հաջորդ սերնդի էլեկտրոնիկայի համար	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

	Ծածկագիր	Ղեկավար	Համաղեկավար	Բնագավառ	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
9.	22rl-039	Համբարյան Վալերի	Ղազարյան Սաթենիկ Անդրանիկի	Ֆիզիկա և աստղագիտություն	Բարձր արագությամբ աստղերի որոնում և նույնացում բազմաստղերից դինամիկ արտանետման և գերնորերի պայթյունների միջոցով:	ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ
10.	22rl-040	Հոխման Թոմաս	Գզոյան Էդիտա Գագիկի	Պատմություն, հնագիտություն	Հայոց ցեղասպանության հատուցման հարցը. սահմանելով ազգային և միջազգային իրավարարության սահմանները	«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ
11.	22rl-061	Մարտիրոսյան Հրաչիկ	Անդրեասյան Արփինե Արմենի	Լեզվագիտություն, գրականագիտություն	Հայոց լեզուն, բնաշխարհը և մշակույթը Հայկական լեռնաշխարհի համատեքստում	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
12.	22rl-045	Մուկասյան Ալեքսանդր	Սիսակյան Նարեկ Սամվելի	Նյութագիտություն	Նոր էներգաարդյունավետ կառավորելի մեթոդ սուպերկոնդենսատորի գրաֆենի հիմքով հիբրիդային էլեկտրոդների պատրաստման համար	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
13.	22rl-056	Պողոսյան Արշակ	Ասատրյան Արևիկ Վարդանի	Նանոտեխնոլոգիա	Մեզի անալիզի թվային կենսատվիչներ, կերպափոխիչներ և զգալ/ներգործել/բուժել սկզբունքով գործող համակարգեր	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
14.	22rl-050	Ռոդրիգես Բարբերո Միգել Անխել	Ռստակյան Վիկտորյա Իգորի	Նյութագիտություն	Կենսակերամիկա ոսկրային վերականգնող անհատական իմպլանտների ադիտիվ տեխնոլոգիայով պատրաստելու համար	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
15.	22rl-031	Ռույոնգ Ժանգ	Վարդանյան Արևիկ Կարենի	Կենսատեխնոլոգիա	Նորարարական մեթոդներ՝ մետաղներով աղտոտված վայրերի ռիսկերի բնութագրման համար	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
16.	22rl-028	Ռուսթա Համիդ Ռեզա	Դարյադար Մահսա Խալեղվերդի	Բուսաբուծություն	Վայրի արժեքավոր դեղատու և սննդային բույսերի ներմուծում հիդրոպոնիկայի և հողային մշակույթ. պարենային անվտանգության համապարփակ ուսումնասիրություն	ՀՀ ԳԱԱ «Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
17.	22rl-023	Փուշ Մարտին	Ասատրյան Վարդան Լևոնի	Կենսաբանական գիտություններ	Հայաստանի գետերում և ողողատային գոտիներում էկոհամակարգային ծառայությունների առկայության քարտեզագրում	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
18.	22rl-060	Օտեվեր Հայդի	Սարուխանյան Տաթևիկ Մակիչի	Ֆիզիկա և աստղագիտություն	Առաջադեմ միկրոֆաբրիկացիա երկֆոտոնային պոլիմերացումով (2PP)՝ ինվիտրո ախտորոշիչ լաբորատորիա-չիպի-վրա պլատֆորմների զարգացման համար	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ